

վրայ Կ.Պոլիսի թուրք բարբառի եւ առողանութեամբ են տպագրած. ես պարտաւորուած էի այդ անունները միշտ գրել եւ ուղղել բնիկ ժողովրդի արտասանութեամբ. օրինակ Կ. Պ. կարդում է «Քիլիսէ», ժողովուրդը արտասանում է «Քիլիսա». Պ. «Բէյ». իսկ գաւառացին՝ «Բէկ». Պ. «Կչլայ». իսկ Գ. «Ղչլակ» եւն եւն: Կ.Պոլսեցին ծ. ձ. ց. ձայները չունի: Ոլթեցին շատ որոշ ասում է «Կոծձոր»: Փէնէկի հասարակութիւնը բնիկներից իսլամացածները պարզ «Դիձանց», «Մածանց» են արտասանում, որ կարիք չի լինում երկար մտածելու. այն ինչ Պ. արտասանում է «Տիզանզ», եւ «Մեզանս»:

Ես տալիս եմ իմ ճանապարհորդական նկատողութիւններին հետ 40 տարւան այլ եւ այլ եղրակացութիւններս, որ ունեցել եմ կարդալով այլ եւ այլ գրուածքներ այս մասին եւ իրականի հետ համեմատութիւններ կատարելով: Ես աշխարհագրութիւնը տուել եմ Կովկասի գիւղուորական շտաբի քարտէզների եւ ուսումնասիրողների գործերի հիմունքով, իմ գիտողութիւններով եւ ուղղումներով: Մանաւանդ երբ նկատում էի, որ գիտական գործի մէջ քաղաքականութիւն էին բանեցնում եւ ծոմում էին, որպէս զի յատուկ անուններ օտարացնեն: Ես յոյս ունիմ, որ կ'ունենամ հետեւորդներ եւ կիսատ թողածներս կը լրացնեն: Եթէ ես երիտասարդ լինէի եւ վստահ, որ պիտի